ՍԴ1/0042/01/24

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

7 մայիսի 2024 թվական քաղաք Երևան

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քրեական պալատը,

նախագահությամբ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Դ.ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

ուսումնասիրելով թիվ ՍԴ1/0042/01/24 քրեական վարույթի տարածքային ընդդատության հարցը լուծելու համար Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահին ուղարկելու մասին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի՝ 2024 թվականի ապրիլի 29-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2024 թվականի ապրիլի 2-ին Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում ստացվել է Դավիթ Վյաչեսլավի Հովսեփյանի

վերաբերյալ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածի 5-րդ մասով թիվ 90152723 (ՍԴ1/0042/01/24) քրեական վարույթը:

Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2024 թվականի ապրիլի 4-ին որոշում է կայացրել թիվ ՍԴ1/0042/01/24 քրեական վարույթն ստանձնելու և 2024 թվականի ապրիլի 11-ին նախնական դատալսումներ նշանակելու մասին:

2. Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2024 թվականի ապրիլի 11-ին որոշում է կայացրել քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին:

3. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2024 թվականի ապրիլի 29-ին որոշում է կայացրել թիվ ՍԴ1/0042/01/24 քրեական վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահին ուղարկելու մասին՝ ընդդատության հարցը լուծելու համար:

4. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2024 թվականի մայիսի 2-ին:

<u>Ընդդատության վերաբերյալ հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

5. 2024 թվականի փետրվարի 16-ի որոշմամբ Դավիթ Վյաչեսլավի Հովսեփյանի նկատմամբ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածի 5-րդ մասով հանրային քրեական հետապնդում է հարուցվել այն բանի համար, որ *«նա, զբաղեցնելով ՊԲ 46492 զորամասի 3-րդ հրաձգային գումարտակի 8-րդ վաշտի հրամանատարի պաշտոնը, կոչումով՝ կապիտան, 2020 թվականի սեպտեմբերի 27-ին ՀՀ կառավարության թիվ 1586-Ն որոշմամբ հայտարարված ռազմական դրության ժամանակ՝ 2020 թվականի հոկտեմբերի 7-ին, «Կարախանբեյլի» կոչվող տեղանքում ստորաբաժանման կազմում մարտական ծառայություն իրականացնելու ժամանակ, իր առողջությանը վնաս պատճառելու (անդամախեղելու) եղանակով դադարեցրել է զինվորական ծառայության առանձին պարտականությունների կատարումը:*

Այսպես.

Դավիթ Վյաչեսլավի Հովսեփյանը, զբաղեցնելով ՊԲ 46492 զորամասի 3-րդ հրաձգային գումարտակի 8-րդ վաշտի հրամանատարի պաշտոնը, կոչումով՝ կապիտան, 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի Հանրապետության ռազմաքաղաքական ղեկավարության կողմից Արցախի Հանրապետության դեմ սանձազերծած և վարած ագրեսիվ պատերազմի կապակցությամբ նույն օրը ՀՀ կառավարության թիվ 1586-Ն որոշմամբ հայտարարված ռազմական դրության ժամանակ՝ 2020 թվականի սեպտեմբերի 28-ին, իր ենթակա ստորաբաժանման կազմում ընդգրկվել է մարտական ծառայության «Կարահանբեյլի» կոչվող տեղանքում: Մինչև 2020 թվականի հոկտեմբերի 7-ն ընկած ժամանակահատվածում կապիտան Դ.Հովսեփյանը նշված տեղանքում ծավալված վաշտի հրամանատարական կետում ծառայության ընթացքում դրսևորել է համածառայողների համար ակնառու վախեցած վարքագիծ՝ մեծապես գտնվելով կահավորված թաքստոցում: Նույն ժամանակահատվածում վաշտի հրամանատարական կետի ուղղությամբ հակառակորդի կողմից իրականացվել է բացառապես հրետակոծություն, իսկ հոկտեմբերի 07-ի կեսօրին, ստույգ չպարզված ժամին, հակառակորդի զինված ուժերի զինծառայողները ձեռնարկել են գրոհ վաշտի պաշտպանության տեղամասի ուղղությամբ, ինչի արդյունքում առաջին անգամ շուրջ 40 րոպե տևողությամբ փոխհրաձգային մարտ է տեղի ունեցել: Տվյալ փոխհրաձգության ավարտից հետո՝ շուրջ 10-15 րոպե անց, կապիտան Դ.Հովսեփյանը, կահավորված թաքստոցի մոտակայքում, գիտակցելով հակառակորդի հետ անմիջական ընդհարման իրական վտանգը, այդ պահին իր մոտ գտնվող, նույն վաշտի ավագ, սերժանտ Թաթուլ Աշոտի Պողոսյանին ամրակցված ԱԿՄ տեսակի ՊՐ 6716 համարի ինքնաձիգով կրակել է իր ձախ ոտնաթաթին՝ ինքն իր առողջությանը պատճառելով ձախ ոտնաթաթի հրազենային գնդակային միջանցիկ վիրավորման, 4-5-րդ մետատարզալ ոսկրերի կոտրվածքների ձևով առողջության միջին ծանրության վնաս՝ առողջության տևական քայքայումով: Արդյունքում՝ կապիտան Դ.Հովսեփյանն իր առողջությանը վնաս պատճառելու եղանակով ժամանակավորապես դադարեցրել է զինվորական ծառայության առանձին պարտականությունների կատարումը, մասնավորապես՝ բուժօգնության

ցուցաբերման նպատակով վերջինս անմիջապես դուրս է բերվել վաշտի տեղակայման շրջանից, տեղափոխվել «Ֆիզուլի» կոչվող վայրում տեղակայված բուժկետ, այնտեղից 2020 թվականի հոկտեմբերի 08-ին տեղափոխվել է Ստեփանակերտի կայազորային զինհոսպիտալ, որտեղից նույն օրը տեղափոխվել է Ջանգեզուրի կայազորային զինհոսպիտալ, ապա՝ Կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալ, որտեղից՝ ձախ ոտնաթաթի միջանցիկ վիրավորում, «4-րդ և 5-րդ ոսկրերի կոտրվածք» ախտորոշմամբ 2020 թվականի հոկտեմբերի 09-ին տեղափոխվել և 2020 թվականի հոկտեմբերի 10-ին ընդունվել է ստացիոնար բուժման «Մասիս բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության վիրաբուժական բաժանմունք, որտեղ նույն ախտորոշմամբ ստացիոնար բուժում է ստացել մինչև 2020 թվականի հոկտեմբերի 28-ը, ապա մեկնել վերականգնողական արձակուրդ: 2020 թվականի նոյեմբերի 18-ին, ՊԲ հրամանատարի 3367-Ա հրամանով, կապիտան Դ.Հովսեփյանը 2020 թվականի նոյեմբերի 1-ից ազատվել է զբաղեցված պաշտոնից՝ թողնվելով ՀՀ ՊՆ կադրերի տրամադրության տակ (…)»[1]:

6. Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2024 թվականի ապրիլի 11-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) 2024 թվականի ապրիլի 11-ին, նախնական դատաքննությունների ընթացքում, վարույթի ընդդատության հարցի քննարկման ժամանակ, մեղադրյալ Դավիթ Վյաչեսլավի Հովսեփյանն իր համաձայնությունն է հայտնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջների համաձայն՝ վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու վերաբերյալ, նկատի ունենալով, որ վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունն Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատական տարածքից են:*

Հանրային մեղադրող Դավիթ Նավասարդյանը և պաշտպան Աշոտ Ապրեսյանը քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու վերաբերյալ առարկություն չեն ներկայացրել:

Թիվ ՍԴ1/0042/01/24 քրեական վարույթով մեղադրական եզրակացությանը կից վարույթին ներգրավված բոլոր անձանց կարգավիճակի և վերաբերելի անձնական

[1] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 2, թերթեր 70-71:

տվյալների տեղեկանքի համաձայն՝ քրեական վարույթին ներգրավված են մեղադրյալը, 14 (տասնչորս) վկաները, բացի այդ, մեղադրյալն ունի պաշտպան, ով բնակվում է Երևան քաղաքում, այսինքն՝ վարույթին ներգրավված են ընդհանուր 16 (տասնվեց) անձինք, որոնցից վկաների մեծամասնությունը՝ 8 (ութ) վկաներ՝ Վոլոդյա Նշանի Խուդաթյանը, Նորայր Էդուարդի Նարիմանյանը, Հայկ Խաչատուրի Վարդազարյանը, Սուրեն Արտակի Ղազարյանը, Արսեն Ալբերտի Կարապետյանը, Վլադիմիր Սարգսի Մանվելյանը, Գևորգ Պարգևի Մելիքյանը և Շալիկո Սամվելի Վարդանյանը, ինչպես նաև մեղադրյալ Դավիթ Վյաչեսլավի Հովսեփյանը և նրա պաշտպան Աշոտ Ապրեսյանը բնակվում են Երևան քաղաքում, իսկ վկաներից՝ Արթուր Մայրիկի Ալեքսանյանը, Առուշան Կամոյի Ավանեսյանը, Թաթուլ Աշոտի Պողոսյանը, Սևակ Սերժի Առուշանյանը, Դավիթ Լեոնիդի Գրիգորյանը, Վահե Մնացի Մանուկյանը բնակվում են այլ դատարանների դատական տարածքներում:

(…)

Տվյալ դեպքում թիվ ՍԴ1/0042/01/24 քրեական վարույթով վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը բնակվում են Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքում:

Նկատի ունենալով, որ վարույթի մասնավոր մասնակիցները և վկաների մեծամասնությունը բնակվում են Երևան քաղաքում, ինչպես նաև մեղադրյալը համաձայնվել է, որ վարույթն ըստ ընդդատության փոխանցվի Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան, Դատարանը գտնում է, որ սույն քրեական վարույթի տարածքային ընդդատությունն անհրաժեշտ է փոխել և այն ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան (…)»[2]*:*

7. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2024 թվականի ապրիլի 29-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) [Դ]իտարկելով քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու մասին որոշման հիմքում դրված հանգամանքները՝ հարկ է ընդգծել, որ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, թիվ ՍԴ1/0042/01/24*

[2] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 4, թերթեր 32-36:

քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու մասին որոշում կայացնելիս դրսևորել է ձևական մոտեցում՝ բավարարվելով վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների բնակության վայրերի զուտ տեխնիկական վկայակոչմամբ:

Մասնավորապես, նշված քրեական վարույթով իրականացված առաջին իսկ դատական նիստի ժամանակ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, իր իսկ նախաձեռնությամբ քննարկելով քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու հարցը, ընդդամենն արձանագրել է, որ մեղադրյալը, պաշտպանը, ինչպես նաև դատակոչված վկաների մի մասը բնակվում են Երևան քաղաքի տարածքում, հետևաբար քրեական վարույթն անհրաժեշտ է ըստ ընդդատության ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան:

Ընդ որում, քրեական վարույթի նյութերի ուսումնասիրությունից ակնհայտ է, որ դատակոչված վկաների մի մասն ընդհանրապես Երևան քաղաքի տարածքում չի բնակվում, իսկ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից վկայակոչված ութ վկաները հանդիսանում են զինծառայողներ և նրանց փաստացի գտնվելու վայրը պարզ չէ: Այսինքն՝ այս առնչությամբ դատարանը բավարար փաստական տվյալների վկայակոչմամբ համոզիչ կերպով չի հիմնավորել ընդդատությունը փոխելու օրենսդրի կողմից առաջադրվող պայմանների առկայությունը:

Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը որևէ հիմնավորում չի ներկայացրել նաև, թե նշված հայեցողական լիազորության գործադրումը և քրեական վարույթի տարածքային ընդդատության փոփոխությունն արդարադատության շահի տեսանկյունից ինչով է անհրաժեշտ:

Վերոգրյալի հաշվառմամբ Դատարանը գտնում է, որ տարածքային ընդդատությունը փոխելու՝ վերը նշված նախապայմանի վերաբերյալ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունները չեն բխում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պահանջից: Նման որոշման կայացումը չի կարող դիտվել իրավաչափ՝ հաշվի առնելով, որ սույն քրեական վարույթով բացակայում է գործի տարածքային

ընդդատությունը փոխելու բացառիկ հիմքը, այն է՝ քրեական դատավարությունն արդյունավետ կազմակերպելու, տեխնիկական և իրավական բնույթի բարդություններն ու խնդիրները բացառելու և պետության ֆինանսական ռեսուրսները խնայելու նկատառումներից ելնելով վարույթը ենթադրյալ հանցանքի կատարման վայրից այլ տարածքի դատարան ուղարկելու անհրաժեշտությունը:

(…)

Այսպիսով՝ Դատարանը համաձայն չէ թիվ ՍԴ1/0042/01/24 քրեական գործով վարույթի տարածքային ընդդատությանը, հետևաբար գտնում է, որ սույն վարույթը պետք է ուղարկել ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահին՝ վարույթի տարածքային ընդդատության հարցը լուծելու համար (…)»[3]*:*

<u>Վճռաբեկ դատարանի քրեական պալատի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Նախևառաջ հարկ է նշել, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը որոշում է կայացրել թիվ ՍԴ1/0042/01/24 քրեական վարույթի ընդդատության հարցը լուծելու համար այն Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահին ուղարկելու մասին: Մինչդեռ, 2024 թվականի փետրվարի 6-ից ուժի մեջ է մտել «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2024 թվականի հունվարի 16-ի թիվ ՀՕ-32-Ն ՀՀ օրենքը, համաձայն որի՝ վարույթի տարածքային ընդդատության հարցը վերջնականապես լուծում է Վճռաբեկ դատարանի քրեական պալատը, ուստի ընդդատության մասին հարցը ենթակա է լուծման Վճռաբեկ դատարանի քրեական պալատի կողմից:

8. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյո՞ք Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ՍԴ1/0042/01/24 քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և քրեական վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին որոշումը:

---

[3] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 4, թերթեր 47-53:

9. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

10. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք*»:

10.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»*[4]:

Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»*[5]:

11. Վճռաբեկ դատարանը *Գևորգ Հարությունյանի* գործով իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «*(...) Գործերի պատշաճ ընդդատությունը, որպես արդար դատաքննության անհրաժեշտ բաղկացուցիչ, հիմնարար իրավական արժեք է: Դրա հիմնարար բնույթը բխում է արդար դատաքննության ինստիտուցիոնալ տարրից՝ անկախ, անկողմնակալ, իրավասու և օրենքի հիման վրա ստեղծված դատարան ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունից:*

---

[4] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

[5] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

Իսկ այդ պարտականությունն իր հերթին, ըստ էության, ամրագրված է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող այնպիսի նորմատիվ ակտերում, ինչպիսիք են ՀՀ Սահմանադրությունը (…), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (14-րդ հոդված) և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (6-րդ հոդված): (…)

Պատշաճ ընդդատության հիմնարար իրավական նշանակությունն այն է, որ յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործը քննող դատարանի որոշման հստակ կանոնների առկայությունը և դրանց կանխատեսելի գործադրումն անհրաժեշտ պայման են կողմնակի դիտորդի մոտ այնպիսի համոզմունք ձևավորելու համար, որ տվյալ կոնկրետ քրեական գործը քննող դատարանը և դատավորը նախատրամադրվածություն չունեն, և տվյալ գործը վարույթ ընդունելիս սուբյեկտիվիզմն ու կամայականությունը բացառված են եղել:

Այսպիսով, քրեական գործերի ընդդատության որոշման հստակ, կամայականությունը բացառող կանոնների առկայությունը և գործադրումը պարտադիր նախապայման են արդարադատության մատչելիության պատշաճ երաշխավորման համար (…)»[6]*:*

12. Վերոգրյալից հետևում է, որ ընդդատության կանոններն այն չափանիշներն են, որոնց հիման վրա որոշվում է, թե տվյալ գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն: Այդ չափանիշների հիմքում ընկած է ոչ թե իրավակիրառների սուբյեկտիվ հայեցողությունը, այլ քրեական վարույթի օրենքով սահմանված օբյեկտիվ հատկանիշները, որոնց առկայությունն էլ թույլ է տալիս արձանագրել տվյալ դատարանի՝ այդպիսին հանդես գալու իրավունքն այդ վարույթով: Միաժամանակ, ընդդատության կանոնները կոչված են անձին զերծ պահելու դատական շրջապտույտից, որը կարող է առաջանալ, եթե դատարանները հրաժարվեն գործը վարույթ ընդունել իրենց ընդդատյա չլինելու պատճառաբանությամբ:

---

[6] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «*Տարածքային ընդդատությունը բոլոր մեղադրյալների համաձայնությամբ կարող է փոխվել, եթե վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը բնակվում է առաջին ատյանի մեկ այլ դատարանի դատական տարածքում: Ընդդատությունը փոխելու որոշումն ընդունում է մեղադրանքը քննող դատարանը*»:

Նույն օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ *«(…) 4. Վարույթն ըստ տարածքային ընդդատության ստացած առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատալսումներ նշանակելը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին, եթե համաձայն չէ վարույթի տարածքային ընդդատությանը:*

(…)

7. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի քրեական պալատը վարույթը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում վերջնականապես լուծում է վարույթի տարածքային ընդդատության հարցը: (…)»:

13.1. Անհրաժեշտ է ընդգծել, որ ընդդատությունը փոխելու վերոնշյալ հայեցողական լիազորությունը կարող է գործադրվել բացառիկ դեպքերում, երբ բավարար փաստական տվյալների վկայակոչմամբ համոզիչ կերպով կհիմնավորվի ընդդատությունը փոխելու օրենսդրի կողմից առաջադրվող պայմանների առկայությունը, ինչպես նաև քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու անհրաժեշտությունը՝ արդարադատության շահի տեսանկյունից: Հետևաբար, նշված նորմը մեկնաբանելիս չպետք է դրսևորվի չափազանց ձևական մոտեցում, այն չպետք է ենթարկվի լայն մեկնաբանության:

14. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- մեղադրյալ Դ.Հովսեփյանը նախնական դատալսումների ընթացքում իր համաձայնությունն է հայտնել, որպեսզի քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխվի[7]:

---

[7] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 4, դատական նիստի արձանագրություն, թերթ 21:

- Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, փաստելով, որ վարույթի մասնավոր մասնակիցները և վկաների մեծամասնությունը բնակվում են Երևան քաղաքում, ինչպես նաև այն, որ մեղադրյալն իր համաձայնությունն է հայտնել, որպեսզի քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխվի, որոշում է կայացրել քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փախանցելու մասին[8]:

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանն իր անհամաձայնությունն է հայտնել քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու վերաբերյալ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի որոշմանը՝ փաստելով, որ քրեական վարույթի նյութերի ուսումնասիրությունից ակնհայտ է, որ դատակոչված վկաների մի մասն ընդհանրապես Երևան քաղաքի տարածքում չի բնակվում, իսկ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից վկայակոչված թվով ութ վկաները հանդիսանում են զինծառայողներ և նրանց փաստացի գտնվելու վայրը պարզ չէ: Արդյունքում, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը գտել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված՝ վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու բացառիկ հիմքը բացակայում է[9]:

15. Սույն վարույթի փաստական հանգամանքները գնահատելով վերոշարադրյալ իրավադրույթների և իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատն արձանագրում է, որ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված՝ քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու հայեցողական լիազորությամբ, քրեական վարույթի տարածքային ընդդատությունը մեղադրյալի համաձայնությամբ փոխել և գործը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր

---

[8] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:
[9] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

իրավասության քրեական դատարան է փոխանցել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի պահանջների պահպանմամբ: Մասնավորապես, սույն քրեական վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ մեղադրյալ Դ.Հովսեփյանի (վերջինիս նկատմամբ խափանման միջոց է ընտրված տնային կալանքը), պաշտպան Ա.Ապրեսյանի և տասնչորս վկաներից ութի բնակության վայրն է Երևան քաղաքը, երեքի բնակության վայրն է՝ Կոտայքի մարզը, վկա Սևակ Առուշանյանի բնակության վայրն է՝ Արագածոտնի մարզը, վկա Դավիթ Գրիգորյանի բնակության վայրն է՝ Արմավիրի մարզը, իսկ վկա Վահե Մանուկյանի բնակության վայրն է՝ Արարատի մարզը[10]: Այսինքն, սույն վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների (ընդհանուր թվով տասնվեց անձ) մեծամասնությունը (թվով տասն անձ) բնակվում է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատական տարածքում: Միաժամանակ, հարկ է նշել, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի այն դատողությունը, որ թվով ութ վկաները զինծառայողներ են և նրանց փաստացի գտնվելու վայրը պարզ չէ, չի բխում սույն վարույթի նյութերից[11]:

16. Ամփոփելով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատն արձանագրում է, որ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ՍԴ1/0042/01/24 քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և քրեական վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին որոշումը հիմնավոր է:

17. Վերոգրյալի հիման վրա, ինչպես նաև ելնելով արդարադատության շահի պաշտպանության և վարույթի արդարացիության ապահովման՝ ողջամիտ ժամկետում քննության անհրաժեշտությունից, Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ սույն քրեական վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 7-րդ մասով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը

---

[10] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 3, թերթեր 106-107:
[11] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 3, թերթեր 78-105:

Ո Ր Ո Շ Ե Ց

Թիվ ՍԴ1/0042/01/24 քրեական վարույթն ըստ ընդդատության ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան:

Նախագահող՝ _____ Հ.ԱՍԱՏՐՅԱՆ

Դատավորներ՝ _____ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

_____ Դ.ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ

_____ Ա.ՊՈՂՈՍՅԱՆ

_____ Ս.ՕՀԱՆՅԱՆ